

եալ Հայուհիին օրինաւոր ամուսնոյն՝ որուն զաւակները կը կրէին Սէրբէճի (Սերբեկաներ) ընդհանուր անունը:

Յիշեալ Սերբեկա կնոջմէն սերեցան քանի մը «Հայ» իշխաններ, որոնք բարձրացան Մուսալիոյ իշխանական աթոռը:

Այդ իշխաններէն ամենէն նշանաւորն է Իօն-էլ-Քումաիլիթ (Յովհաննէս Անդութ) որ այդ կոչումը ստացաւ իր քաջութիւններուն եւ վրիժառութեանցը համար: Պատմիչները գայն կ'անուանեն նաեւ Իօն Արմէանուլ (Յովհաննէս Հայ): Երեք տարի կառավարեց (1572-1574) ան երկիրը, եւ սպաննուեցաւ դաւաճանութեամբ:

Սոյն Իօն-էլ-Քումաիլիթ իշխանին մասին հետեւեալը կը պատմէ Կամենիցի հայ տարեգիրքը (Կամենից, էջ 44)՝ առանց յիշելու սակայն իշխանին հայ ծագումը. «1574. պատահեցաւ որ Վալաքիոյ մէջ մէկ իշխանին վրայ ուրիշ մը կը բերէին. երբ Վալաքիոյ իշխան Իւոն այս բանը լսեց՝ զօրք ժողովեց եւ դնաց նոր իշխանին վրայ. հասաւ Մուսթէնիա, եւ իր թշնամին գոտու անպատրաստ, ճաշի վրայ. յարձակեցաւ եւ կոտորեց. նոր իշխանը փախաւ Պրայլա եւ փակուեցաւ բերդին մէջ: Իւոն կատղեցաւ, Պրայլա եկաւ եւ ամբողջ քաղաքը այրեց ու թալանեց, բնակիչները շատերը սրէ անցուց եւ շատերն ալ Դանուբի մէջ խեղդամահ ըրաւ, նոյնիսկ երախաները. յետոյ աւարի տալով քաղաքը իր տեղը դարձաւ: Յետոյ գաւառին Թուրքերը հաւաքուեցան ու կռիւի ելան իր դէմ. կոտորուեցաւ 2000 անձ: Յետոյ բողոք եղաւ խոնտիքարին (Հինքեար=Սուլթան) թէ Մոլոտովայի պէյը քեզ դաւաճանեց, եւ հասցուց այսքան չարիք: Սուլթանը, կատաղի դադանի պէս, սրտմտած, հրամայեց սանձախներուն (նահանգներուն) եւ Դաղրի խանին յարձակիլ Վալաքիոյ պէյին վրայ եւ բնաջինջ ընել երկիրը անխնայ: Դաղրի խան, իր եօթը տղոցմով եւ հեծեալզօրքով, մտաւ երկիրը, հրոյ ճարակ ըրաւ, սուրէ անցուց, գերի եւ աւար առաւ, առանց բան մը ձգելու: Ազատեցան միայն Սէրբէթն ու Սուչովան: Իսկ Իւոն իշխանը ողջ բռնեցին եւ սպանեցին չարաչար, իր տեղը բերել նստեցնելով նոր իշխանը»:

Իօն-էլ-Քումաիլիթի մահէն յետոյ աթոռ բարձրացաւ Կարապետ՝ որ մօր կողմէ եղբայր էր Իօնի, այսինքն՝ Սէրբէկայի զաւակն էր իր օրինաւոր ամուսինէն: Ծագումով հայ իշխաններուն մէջ կը յիշուին նաեւ Կոստանդին եւ Ալեքսանդր, որոնք Կարապետի հարազատ եղբայրներն էին, եւ Ալեքսանդրի զաւակը՝ Պետրոս:

Քաջնօփու ուսմէն պատմիչն ալ կ'ըսէ թէ (Istoria Romanilor, IV, էջ 124 — 126) չորս հայեր, Սէրբէճի մականունանեալ, յայտնուեցան իբր ժառանգորդ Մոլոտովայի գահուն, Իօն Վոտայի մահէն յետոյ. — Կարապետ, որ Իօնի Փօթքովա կամ Իօնի Քրէցուլ անուամբ գահ բարձրացաւ 1577-ին, Ալեքսանդրու, Քոնսթանդին եւ Բեթրու, առաջին երեքը Իօնի Վոտայի մօր զաւակները, ծնած Շէրբեկա անուն հայուն հետ անոր օրինաւոր ամուսնութենէն եւ վերջինը թողը՝ իր Ալեքսանդրու զաւակէն եղած»:

Այս Պետրոս իշխանին մասին հետեւեալ ծանօթութիւնները կը գտնենք Կամենիցի հայ տարեգրութեան մէջ (Կամենից, էջ 58).

«1592. Բեթրա անուն մէկը Օլախի իշխան անուանուեցաւ. որդին էր Օլեքսանդր իշխանին. երկար ատեն երկրէ երկիր շրջեցաւ թագաւորներու մօտ. յետոյ Կամենից եկաւ ու կարճ ատեն մը մնաց: Իրմէ առաջ Ահարոն անուն իշխան մը կար, որ շատ չարիք կը հասցընէր Օլախի. լուրը Սուլթանին հասաւ, եւ սա իր մօտը կանչեց գայն. այդ պահուն Օլախի երեւելիները Բեթրան իշխան ընտրեցին իրենց եւ հնազանդութիւն յայտնեցին անոր: Անոր հետ կար Աւագն ալ: Ատեն մը տեւեց անոնց իշխանութիւնը: Յետոյ Ահարոնը ետ դարձաւ Սուլթանին հրամանովը, հետը բերելով թուրք պէյ որ աղա կը կոչուէր եւ անոր զօրքը: Եկաւ եւալ, ողջ բռնեց Բեթրան, եւ Աւագը որ հայ էր եւ Մաթէի որդի, եւ տարին Սուլթանին՝ անոնց քիթը կտրելէ յետոյ, չղթայակապ, բանտ դրին Աւագը, բայց ան փախաւ բանտէն ու դարձաւ: Իր տեղը՝ բռնեցին երկու հայ երկտասարդներ, Գրիգոր Թարքոյին եւ Սիմոն Ջոխնային, եւ զանոնք բանտը դրին»:

Ինչպէս կը տեսնուի, յիշեալ իշխաններէն Իօն-էլ-Քումաիլիթը մօր կողմէ միայն հայ էր,